

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

**Տ Օ Ն Օ Ր Ե Ր Ի Ն**

**Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Դ Ե Դ Ա Ր Ե Յ Ն Ե Լ Ո Ւ Մ Ը Ս Ի Ն \***

Մեր այս վճիռը շատ առարկութիւնների կը հանդիպի և մեզ հոգեւոր-բնական մէջ կը մեղադրեն. այսինքն կասեն, որ մենք ձգտում ենք հասարակական կեանքը կրօնի խիստ պահանջներին ենթարկել, սակայն մեզ համար ոչ մի մեղադրանք և առարկութիւն երկիւղալի չեն: Ի հարկէ ամենից առաջ մեզ կասեն. «Այժմ առաջուայ ժամանակը չէ», որ չէ կարելի ներկայ կեանքի շարժումը դադարեցնել և մեր ծիսական կանոններով արուեստների և քաղաքակրթութեան զարգացման արգելք լինել և որ վերջապէս չէ կարելի ուրիշ քաղաքակրթութեամբ ազգերի կեանքի կարգապահութիւնից շեղուել, որոնք մեզինից դանազան պահանջներ են անում և այլն: Բայց իրենց քրիստոնեայ անուանող մարդոց յայտնի է, որ քրիստոնէութիւնը ոչ թէ մի դարի, այլ ամէն ժամանակների համար է նշանակուած և յատկապէս մարդկութիւնը ճշմարտութեան և արդարութեան ճանապարհից շեղուելուց ազատ պահելու և առաջնորդելու գէպի հոգեւոր և յաւիտենական կատարելութիւն և ոչ թէ միայն քաղաքակրթութեան ու լուսաւորութեան արտաքին յաջողութեան համար: Այս մտքով և Պօղոս առաքեալը քրիստոնեաներին յորդորում է, որ իրենց համար օրինակ ու կատարելատիպ չհամարեն այս կամ այն դարի մարդոց կեանքը. այլ միշտ մտքով նորոգուին և աստուածաբան կամքին հետևելով իրենց կեանքի ճանապարհը լուսաւորեն (չը-

\*) Տե՛ս Արարատ 1891 թ. Հոկտեմբեր:

ում՝ գլ. ժ. 2): Խակ եթէ կամենում էք մեր նիւթապաշտ գարի  
 ճշմարիտ հետեւող լինել, եկեղեցու օրէնքները վաճառականութեան  
 պահանջների հետ յարմարացնելու մասին մի գատէք, այլ գնա-  
 ցէք Եւրոպայի գիտնականների այն ժողովները, որտեղ տօները բա-  
 նաղ մարդոց հանգստութեան օրերն են համարուում և ուշադրու-  
 թեամբ քննուում են՝ թէ որոշ օրերի մէջ բանուորը որքան ոյժ է  
 ծախսում և այդ վերականգնելու համար որքան ժամանակ է հար-  
 կաւոր հենց ճիշտ այնպէս՝ ինչպէս հոգատար կառավարը հաշ-  
 ւում է թէ աշխատանքից յետոյ՝ աշխատող ձիերին և եզներին, որ-  
 քան հանգստութիւն պէտք է տալ: Քրիստոնէական կրօնը մարդու  
 համար միայն այս հանգիստը չէ պահանջում, այլ և պահանջում  
 է մտքի և սրտի հանգստութիւն կենսական հոգսերից և աշխատու-  
 թիւններից, — աստուածային վարդապետութեան, եկեղեցւոյ ու  
 հաւատի բարերար ազդեցութեան շնորհիւ հոգւոյ ներքին կեանքը  
 թարմացնել և վերջապէս՝ որ մարդս կազդուրուի, որպէս զի հրա-  
 պոյրների և մեղքերի գէմ՝ մեղանչելով՝ կարողանայ յաւիտենական  
 կեանք ժառանգել: Խակ մարմնական ագահ շահերով առաջնորդուող  
 քաղաքականութիւնը չի դադարիլ ճնշումն գործել մարդկային հո-  
 գու վերայ՝ մինչև որ Աստուծուն և յաւիտենական կեանքը մո-  
 ռացնել տալով՝ չի հպատակեցնել նորան: Մեր ազգի բարոյական  
 յայտնի ախտն և որ մենք օտարների օրինակին հետեւելով և նոցա  
 պահանջներին զիջանելով՝ մեր լաւ սովորութիւնները և բարոյա-  
 կան օրէնքները արհամարհում ենք, ուրիշների կարծիքից վա-  
 խենալով՝ անտեղի յանդիմանութիւնների առաջ փոքրոգի ենք  
 գտնուում, մինչև իսկ մեր ազգի անգամ լինելը ամօթ ենք համա-  
 բոււմ: Ժամանակ է, որ մենք այդ թուլութիւնից ազատուենք և  
 ինքնուրոյն՝ այսինքն քրիստոնեայ լինենք: — Մենք ճանաչում ենք  
 մի այնպիսի քրիստոնեայ ժողովուրդ, որը արդի քաղաքականութեան  
 մէջ զարգացած է և համաշխարհային վաճառականութիւն ունի,  
 բայց տօներին պահպանում է իւր բարոյական հանգստութիւնը և  
 ուրիշներին ստիպում է յարգել իւր օրէնքները և կեանքի կարգե-  
 րը: Մենք գիտենք, որ Մահմետականները իրենց տօները սուրբ են  
 պահում: Վերջապէս ի մեծ ամօթ մեր աննում ենք, որ հրէա-

ներն էլ իրենց շաբաթը սրբութեամբ են տօնում. և միայն մենք խնայում ենք եկեղեցական և տէրուհական տօները նուիրել Նսրան, Աւ օր հարկն է:

Բաւական է, որքան օտարների խօսքերը կրկնեցինք, թէ տօները ժողովրդին զրկում են աշխատանքից և գործով վնասում են վաճառականութեանը և արուեստներին: Այսպիսի կանխակալ կարծիքներ լսվում է տօներին վաճառականութիւնը դադարեցնելու մասին խօսելու ժամանակ: Ի հարկէ այսպէս մտածում են միայն նիւթական շահերը աչքից չթողնողները և այն վախճաւ կարծամիտները, որոնք կարծում են թէ աստուածային կամքը ճշտութեամբ կատարելով իրենց երկրային շահերին կը վնասեն: Այդպիսիներին շատ յարմար է ասել Փրկչի այն խօսքերը, որ Նա ասաց պեկոծութիւնից ընկղմելու երկիւղի մէջ գտնուող աշակերտներին այն ժամանակ, երբ ինքը նոցա հետ նաւի մէջն էր. «Ո՛ւր են հաւատք ձեր» (Ղուկ. գլ. Բ. 25): Կիւրակէի հանգստեան մասին ընդ միշտ պատուէր տալով միթէ՞ Աստուած չնախատեսեց, որ մարդիկ ամբողջ օրեր կենսական աշխատութիւններից զրկուելով կարող են երկիւղ կրել իրենց գործերի վնասուելուց: Նա ոչ թէ խօսքով է մեզ համոզում, այլ գործով. փորձով հասկացնում է, որ Իրեն ջերմեւանդութեամբ պաշտողները իւր օրհնութիւնը ամէն դէպքում կը օտանան: Իսկ գալով շաբաթ օրը սուրբ պահելու խնդրին՝ ի նկատի պէտք է ունենալ, որ հենց սկզբից Խաչէլացիներին յայտնուած էր, որ շաբաթ օրը մանանայ չպէտք է իջնէր, ուստի և նորա նախընթաց օրը ստորականից երկու անգամ աւելի էր իջնում և շաբաթ օրը չէր վչանում, ինչպէս այդ ստորաբար լինում էր, եթէ մէկը լուր օրը կամենում էր յաջորդ օրուայ համար ևս հաւաքել (Եւ. գլ. ԺԶ. 5. 20): Եօթներորդ տարուայ կամ շաբաթ օրուայ օրէնքի մէջ, (որով հրամայվում էր այդ տարի երկիրը չհերկել, չցանել և չմշակել այգիները), ասուած էր վեցերորդ տարին երկրի բոլոր բերքերը եռապատիկ հունձք կըտան, որ բաւական կըլինի ոչ միայն եօթներորդ այլ և ութերորդ տարուայ համար, երբ պէտք է մշակուի երկիրը, մինչև անգամ իններորդ տարուայ համար, երբ պէտք է

ութերորդ տարուայ ցանածը ժողովէին (Ղևտ. գլ. Իե. 21. 22): Շաբաթ—տարուայ առաջ լինելիք այս եռապատիկ հունձքի խոստումը Աստուած միշտ կատարում էր, քանի որ Հրէաները ապրում էին Պաղեստինում: Փրկիչը շաբաթուայ օրէնքից այս խոստումը չիւեց, սասց, որ Մովսիսական օրէնքից չպէտք է անկատար մնայ «և յովտ մի, որ նշանախէց մի է» (Մատթ. գլ. Ե. 18): Այս բոլորը մոռանում ենք, երբ ագահութեամբ աշխարհացին շահերի ետեիցն ենք ընկնում և երբ մոռածում ենք, որ իբր թէ Աստուծոյ չորրորդ պատուէրը ճշտութեամբ կատարելով՝ պէտք է մնասուենք: Այն ինչ ցաւօք սրտի շատ անգամ տեսնում ենք, ինչպէս գիւղացու աշխատանքները փչանում են և առատ բերքը ևս դաշտում փոռւմ է անժամանակ եկած անձրևներից կամ արտերը չորանում են երաշտից: Երբ որ առատ անձրև է գալիս, ստում ենք, մի քանի միլիօնների օգուտ կրտսանանք, սակայն մոռանում ենք, որ բոլոր գործերի յաջողութիւնը կախումն ունի Նորանից, Ո՛վ որ իւր արեգակը հաւասարապէս ծագում է բարիների և չարերի վերայ և անձրև է տալիս արգարներին և մեղաւորներին: Անգագար գանգասներ ենք լսում, «հունձքը վատ է, վաճառականութիւնը լաւ չէ գնում, ժողովուրդը փող չունի», ի՞նչ է սորա պատճառը: Միթէ՞ սցն չէ, որ Աստուծոն հաճելի չէ առատութիւն սալ այն մարդոց, որոնք յոյս են դնում միայն իրենց անգուլ աշխատանքի վերայ և մոռանում են տօներին ազօթել այն երկնաւոր հօրը, որի ողորմած աջը մի ակնթարթում փոխարինում է մեր մնասները և լրացնում է սրկասները: «Մէր են հաւատք ձեր: — Այ ունիք, վասն զի ոչ խնդրէք» (Յակ. գլ. Գ. 2):

Վաճառականութիւնը տօներին գաղարեցնելու մասին մտածողներից շատերը ըստ երևոյթին դժուարանում են վճռել, ի՞նչ բան պէտք է թողատրել վաճառելու և ի՞նչ արգելել: Ի՞նչպէս պէտք է անել, որ ժողովուրդը դժուարութեան մէջ չընկնի օրուայ հարկաւոր պիտոյքները գնելու և վաճառելու վերաբերմամբ: Ի՞նչպէս պէտք է անել, երբ անակրնկալ կերպով հիւր է գալի և նախընթաց երեկոյեան հարկաւոր պատրաստութիւնը չէ տեսնուած և ինչ: Այս բոլոր առարկութիւնների գէ՛մ այն կասենք, որ եթէ աշխա-

տէք յիշել և թուել բոլոր ծայրայեղ դէպքերը ու հանգամանքները, այն ժամանակ ժողովորդին կզնէք այն դրութեան մէջ, որի մէջ գտնուում էին Հրէաները Փարիսեցիների բառական հայեացքների և պահանջների շնորհիւ, որ մինչև այն աստիճան էր հասցրած, որ շաբաթ օրը մինչև անգամ արգելուում էր հիւանդներին օգնել (Ղուկ. ԳԼ. ԺԳ. 14): Տօների և եկեղեցական բոլոր օրէնագրութիւնների մասին եղած քրիստոնէական վարդապետութեան նպատակը ոչ թէ այն է, որ նման պատուէրներով քրիստոնէական ազատ հոգին ճնշէ, այլ որպէս ղի նոցա միջնորդութեամբ և հրահանգով բարեգործութեանց մէջ վարժելով՝ մարդոց մօքի մէջ քրիստոնէական լոյս ծագէ, իսկ սրտի մէջ — աստուածային երկիւղ, որոնց ներկայութիւնը մարդու մէջ հաստատում է նախ՝ քրիստոնէական իմաստութիւն ու ղգօնութիւն և երկրորդ՝ բարին չարից և թոյլատրելին անթուլատրելոյ տարբերելու կարողութիւն (Եբբ. ԳԼ. Ե. 14): Քրիստոնէական այս իմաստութիւնը ժառանգում են թէ այն անհատները և թէ այն ազգերը, որոնց դաստիարակում է եկեղեցին, գիտակցական կերպով օրէնքներ կատարելը և պարտագանցութեան երկիւղը սովորցնելով: — Ստրանից կէս դար առաջ մենք ճանաչում էինք մի պանդակապետ, որը՝ եկեղեցու զանգակի առաջին հարուածը լսելով՝ հիւրերին հրաւիրում էր դուրս գնալ և ապա՝ պանդակը փակելով՝ իւր ընտանիքի հետ եկեղեցի էր գնում: Ահա քրիստոնէական հայեացք, որը տօներին վաճառականութիւն անելու մասին մշտածելիս միշտ աչքի առաջ պէտք է ունենալ: Յայտնեցէք, որ դուք աիրօջ օրէնքներին սրբութեամբ էք վերաբերում, տօներին վաճառականութիւնը և աւօրեայ ուրիշ աշխատութիւնները անթոյլատրելի էք համարում, ապա ժողովուրդը յանձնեցէք եկեղեցոյ հովանաւորութեան և հաւատացած եղէք, որ քրիստոնէական խիղճը և հասարակաց բանականութիւնը կորոշեն թէ երբ և որպիսի ծայրայեղ կարիքների ժամանակ կարելի է բացառութիւններ անել: Հին կտակարանի շաբաթուայ հանգստի մասին եղած բառական խտութիւնը ի նկատի ունենալով՝ Տէրն ինքը այդպիսի անհրաժեշտ բացառութիւնների մասին ակնարկեց ասելով՝ «Իւրա-

քանչիւր սք ի ձէնջ ի շաբաթու սչ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մնրոյ և տանի տայ ջուր» (Ղուկ. գլ. ԺԳ. 15):— Թէ աստուածային օրէնքները կատարելու ժամանակ որ աստիճան ազատութիւն է թոյլ տրուամ, զորա համար ֆրիլիչը Գաւթի խրատական օրինակն է բերում, որը՝ Սաւուղիյ հայածուելու ժամանակ քաղցածանալով՝ «եմնւա ի սուն Աստուծոյ՝ և եկեր զհացն առաջաւորութեան. զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ որոյ ընդ նմայն էին, բայց միայն քահանայից» (Մատթ. գլ. ԺԿ. 4): Տէրը ասում է. «Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վասն շաբաթու» (Մարկ. գլ. Բ. 27): Տօն օրերին վաճառականութիւն կամ ուրիշ առօրեայ գործ անելու ժամանակ ևս կարող են այդպիսի բացառութիւններ տեղի ունենալ քրիստոնէական խղճի առաջնորդութեամբ և առանց ընդհանուր օրէնքի ոյժը թուլացնելու: Բայց որովհետև բոլորին մատչելի չէ այս բարոյական—ծիսական օրէնքը հասկանալը, որովհետև շատ մարդիկ օրէնքի միտքը ուղիղ չեն բմբռնում և մաքուր խղճի տէր չեն, ուստի և մնում է առաքելոյ խրատին անսալ, որ վերաբերում է բոլոր բարի և իշխանութիւն ունեցող քրիստոնեաներին. «Մխիթարեցէք զկարճամիտս, պատասպարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենսին»: Երբ որ քաղաքական խորհուրդների և ժողովների մէջ հարցը այսպէս կը վճռուի այն ժամանակ միայն նոքա իրաւունք կունենան մեզանից—եկեղեցւոյ սպասաւորներիցս պահանջել, որ առանց ծուլանալու մեր սարտականութիւնը կատարենք, ժողովրդին դատախարակենք, տաճարներում քարոզենք, արտաքոյ աստուածաբանութեան զրուցաստրութիւններով զբաղեցնենք և այլն:

Ըստ երևոյթին զարգացած, բայց քրիստոնէական համոզմունք չունեցող և իրենց ուրիշներին կառավարելու ընդունակ կարծող մարդիկ մի ուրիշ հարց էլ են առաջարկում. «Տօներին ժողովուրդը (ի հարկէ հասարակ դասակարգը) ի՞նչ պէտք է անէ, եթէ վաճառականութիւն անելը և աշխատելը նորան արգելուի»: Մենք այդպիսիներին կրպատասխանենք, ժողովուրդն այն կանէ, ինչ որ դուք, որ նոցա գլուխն էք: Եթէ դուք նախատօնակներին ջերմե-

աւանդութեամբ եկեղեցի կերթար, տօն օրերը ամբողջ պատարագին ներկայ կգտնուէր և ժամասացութեան միջոցին չէք խօսիլ, ժողովուրդն էլ կուրախանայ և սուրբութիւն կրգարձնէ տօներին ժամասացութեան ներկայ գտնուել: Եթէ դուք ինչպէս ձեզանից շատերն են անում, տօների նախընթաց օրերը և գիշերները խաղերի և խրճուղիների մէջ կանցկացնէք և շատ սւտելուց ու խրմելուց մինչև ճաշուայ պատարագի վերջանալը կը քնէք, այն ժամանակ ի հարկէ զարմանալի չէ, եթէ ձեր ազատութեամբ հրապուրուի և ժողովուրդը ինչպէս որ այդ ցոյց է տալիս և իրականութիւնը: Վերջապէս եթէ տօներին ժողովրդին ախորժելի և կրթիչ զբաղմունքներ տաք, օրինակ ճաշակն ազնուացնող երգեցողութիւն, խրատական—բարոյական գրքերի ընթերցանութիւն ևլն, ժողովուրդը սիրով կընդունէ, ինչպէս և դժբախտաբար կարող է հրապուրուել ձեր թատրոններով, որոնք տարէցտարի ազականութեամբ և կարցնում են իրենց գեղարուեստական արժանիքը: Թերթեցէք պատմութիւնը, զօրութեամբ և կրթութեամբ պարծեցող մեծագերի քայքայման և անկման պատճառը ս'ի եղաւ: Միթէ՞ առաջնակարգ դասակարգը չէր, որ առ ոչինչ էր համարում ժողովրդի ժամանակի ընթացքում սրբագործուած աւանդութիւնները, բարքն ու չարքը և բարի սուրբութիւնները և սխալ ու մոլոր վարդապետութիւններով հրապուրուելով ընկղմւում էր շապուրութեան ու մեղքերի մէջ:

Ասացինք, որ չ'աճառականութիւնը տօներին գազարեցնելու որոշման ժամանակ քաղաքական ժողովների տարածումները և կամայականութիւնները ճնշում են ժողովրդին և տանջում են նորա խիղճը: Բարեսրաշա վաճառականները եկեղեցւոյ սպասաւորներին գանգատում են, որ տօն օրերի որոշ ժամերին նշանակուած չ'աճառականութիւնը նոցա ճնշում է, որ նորա ազատութիւն չունին ոչ ժամասպաշտութեան ներկայ գտնուելու և ոչ իրենց ընտանիքի մէջ հանգստանալու:— Վերջապէս մենք տեսնում ենք, ինչպէս չ'աճառականներից մի քանիսը իրենց ազատ կամքով հեռուցեալ սկսում են տօներին վաճառականութիւն չանել: Այս երեւոյթը ակնյայտնի կերպով տեղի ունեցաւ, երբ Առևտրատանում

առաջին անգամ տօնվում էր թագաւոր կայսեր հոկտեմբերի 17-ին վտանգից ազատուելու տարեդարձը:

Մարդ խղճահարկում է, տեսնելով քրիստոնեայ ժողովրդին անբնական դրութեան մէջ, որովհետև քրիստոնեայ ժողովուրդը զլանում է տօներին աստուածահաճոյ գործեր կատարել և իւր քրիստոնէական զգացմունքների հաւատարիմ թարգմանը լինել:—

Ո՞վ ճշմարիտ հաւատացեալների և ի՞նչ էք սպասում, ումնից էք վախենում: Արգէն ձեզ յայտնի է տէրունական օրէնքը, որ սուրբ օրերը ձեր հոգին ազատում է կենսական ամեն տեսակ գործերից և աշխատանքներից: Աւրեմն մնում է, որ Աստուծուն նուիրուած սուրբ օրերին վերականգնուի խանգարուած կարգապահութիւնը և խաղաղութիւնը, որ ժողովրդի համար իսկապէս բարերար հեռեանքներ կարող է ունենայ: Ճշմարիտ է, երբ հասարակութեան մեծամասնութեան մէջ որևէ վատ սովորութիւն արմատացել է, նորա դէմ մարտնչելը դժուար է. սակայն արգէն այս չարիքի դէմ կռուել սկսողներ կան և շատերն էլ ի սրտէջանկանում են նորան ոչնչացնել: Աւմ հոգին որ աւելի է օժտուած աստուածային երկիւղով և ճշմարիտ հաւատով, նա աւելի պարտական է հաստատուն կերպով սկսել այն պատերազմը և յառաջ տանել: Տօներին քաղաքներում ձեր խանութները և վաճառատները վաղեցէք, գիւղի վաճառականներն էլ ձեր օրինակին կը հետևեն. խելքի կը գան եւ գիւղացիք ու տօնախաճառների համար ուրիշ օրեր կորոշեն:

Թարգմ. \*\*\*